ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 5. Կառավարության լիազորությունները անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում

1. Անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում Կառավարությունը՝

1) ապահովում է ֆունկցիոնալության գնահատման ոլորտում միասնական պետական քաղաքականության իրականացումը.

2) հաստատում է հաշմանդամության գնահատման համակարգի բարեփոխումների և անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգ ներդնելու ծրագիրը.

3) հաստատում է անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը, չափորոշիչները և գործիքները.

4) հաստատում է ծառայությունների անհատական ծրագրերը կազմելու և իրականացնելու կարգը.

4.1) հաստատում է բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը.

4.2) հաստատում է բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները.

4.3) հաստատում է հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական անհատական ծրագրերի կազմման և իրականացման կարգը.

5) հաստատում է աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված վնասվածքների, մասնագիտական հիվանդության կամ առողջությանը հասցված այլ վնասի դեպքում մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանը սահմանելու կարգը և չափանիշները.

6) հաստատում է անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի բարեփոխումների իրականացմանն ուղղված ռազմավարությունները, հայեցակարգերը, ծրագրերը.

7) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 13. Եզրափակիչ մաս

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի սեպտեմբերի 1-ից և գործում է 2023 թվականի փետրվարի 1-ից, բացառությամբ 5-րդ հոդվածի 4.1-ին, 4.2-րդ և 4.3-րդ կետերի:

Հոդված 14. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: ~~Մինչև ենթաօրենսդրական իրավական ակտերը սույն օրենքին համապատասխանեցնելը դրանք կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենքին:~~

2. Սույն օրենքի դրույթները չեն տարածվում անժամկետ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվածների վրա, եթե վերջիններս նման ցանկություն չեն հայտնել:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 1-ին, 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ և հաշմանդամ երեխա ճանաչված անձանց համար սահմանված արտոնությունները պահպանվում են մինչև ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանի գնահատումը: